

ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻՔՅԱՆ

(Մեկնության 90-ամյակի առթիվ)

Քանադի. գիտ. գրական Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Լրացավ ՀեՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Սահակի Ղարիբյանի ծննդյան 90 տարին։ Ա. Ղարիբյանը, որ հայտնի է 50 տարուց ավելի ծավալած գիտական, մանկավարժական բեղուն գործունեությամբ, ծնվել է 1899 թ. հունվարի 27-ին, Արտաշատի շրջանի Այգեզարդ (Դարդալու) գյուղում՝ հողագործ-աշխատավորի ընտանիքում։ 1909 թ. ընդունվել է տեղի ուսական հնգրասյան դպրոցը, ուսումը շարունակել է Երևանի նախ՝ պրոգիմնազիայում, ապա՝ արական գիմնազիայում և ավարտել այն 1919 թ.։ Դա հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող, ծանր ու տառապալից ժամանակ էր, որի հորձանուտներից դուրս չի մնում ապագա գիտնական-մանկավարժը և մասնակցում է Սարգսրապատի ճակատամարտին, խիզախություն, քաջություն հանդես բերում և արժանանում Գեորգիևյան խաչի...

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո սկսվում է Արարատ Ղարիբյանի ուսումնառության երկրորդ շրջանը։ Նա նպատակադրվում է ծառայել հայ ժողովրդի լուսավորության գործին և 1922—1928 թթ. ուսուցչություն է անում Երևանի յոթնամյա և Աբովյանի անվան երկրորդ աստիճանի դպրոցներում։ Միաժամանակ գիտելիքների պակաս զգալով և տենչալով ստանալ բարձրագույն կրթություն, Ա. Ղարիբյանը 1923 թ. ընդունվում և 1927 թ. ավարտում է Երևանի նորաստեղծ համալսարանի բանասիրական ֆակուլտետը։

Այդտեղ էլ նա աշակերտում է նշանավոր հայագետներ Հր. Աճառյանին, Մ. Աբեղյանին, Հ. Մանանդյանին, Գր. Ղափանցյանին, հրապուրվում նրանց, մանավանդ Հր. Աճառյանի դասախոսություններով, հատուկ սեր տածում լեզվաբանական գիտության ու հայագիտության նկատմամբ, դրսևորելով լեզուների ուսանելու փայլուն ունակություններ և լեզվաբան դառնալու բնատուր ձիրք ու կարողություններ։

Այդքսնով, սակայն, չի ավարտվում Ա. Ղարիբյանի ուսումնառությունը. 1928 թ. նա ընդունվում է համալսարանի ասպիրանտուրան՝ հայոց լեզվի պատմության մասնագիտության գծով, 1931—1932 թթ. աշակերտում է Ն. Յա. Մառին, լեզվաբանական հարուստ գիտելիքներ է ձեռք բերում ու նրանցով զինված մտնում հայ լեզվաբանության աշխարհը, ծավալում լայն գործունեություն, որն ընթանում է երկու հիմնական՝ հասարակական-կազմակերպչական և գիտական-մանկավարժական աշխատանքների ուղղությամբ։ Արարատ Ղարիբյանը այնպիսի գիտնական ու գործիչ էր, որ արձագանքում էր ժամանակի հրատապ հարցերին, ջանում էր տեսական ու գործնական խնդիրները շաղկապել իրար և ըստ կարելիության օգուտ բերել դպրոցին, բուհին, լուսավորության գործին, ինչպես նաև հայագիտության զարգացմանն ու առաջընթացին։

Բավական հարուստ ու նշանակալից է Ա. Ղարիբյանի դասախոսական գործունեությունը. 40 տարուց ավելի նա անընդմեջ դասախոսական աշխատանք է կատարել և շատ ու շատ սերունդների ավանդել հայագիտական բազմազան առարկաներ՝ հայոց լեզվի պատմություն, հայոց լեզու, գրաբար, հա-

լերենի պատմական քերականություն, հայ բարբառագիտություն, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա:

Մեծ սիրով ու ջերմեռանդությամբ Ղարիբյանը դասախոսել է Երևանի պետական համալսարանում, Երևանի, Լենինականի, Բքիլիսիի, Բտբվի մանկամարժական ինստիտուտներում: 1934 թ. հիմնադրել և մինչև 1962 թ. գլխավորել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնը, աշխատել այնտեղ մինչև իր կյանքի վերջը:

Ա. Ղարիբյանը երկար ժամանակ ղեկավարել է լեզվաբանական մի շարք կենտրոններ. 1938 թ. վարել է ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի լեզվի բաժինը, կազմակերպել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտը և երկու անգամ՝ 1944—1950, 1955—1962 թթ. ևղել նրա դիրեկտորը, 1962 թ. ստանձնել է ՀԽՍՀ ԳԱ գրադարանային խորհրդի նախագահի և հիմնականում (ֆունդամենտալ) գրադարանի դիրեկտորի պաշտոնը:

Այս բոլորից բացի, նա հասարակական կարգով աշխատել է որպես ՀԽՍՀ ԳԱ հասարակական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, 1955—1967 թթ. գլխավորել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի, գրականության և արվեստի ինստիտուտների գիտական աստիճաններ շնորհող միացյալ գիտական խորհուրդը, հսկայական ջանքեր թափել հայագետ-լեզվաբանների պատրաստելու, հայ լեզվաբանական գիտության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները բարձր հիմքերի վրա դնելու համար:

Դրսեորելով կազմակերպչական փայլուն կարողություններ, Ա. Ղարիբյանը միաժամանակ կանգնած է եղել գիտության առաջատար դիրքերում և անձնապես օրինակ է ծառայել ուրիշներին. հայ իրականության մեջ բանասիրության գծով նա առաջինն է պաշտպանել թեկնածուական (1937 թ.) և դոկտորական (1940 թ.) դիսերտացիաներ, 1940 թ. ստացել է պրոֆեսորի կոչում, 1947 թ. ընտրվել է Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1960-ին՝ իսկական անդամ:

Ակադեմիկոս Արարատ Ղարիբյանը ընդհանրապես գիտամանկավարժական և աշխատանքային գործունեության որքան երկար, այնքան էլ բարդ ու դժվար, վայրիվերոտ ուղի է անցել. ըստ որում նա շատ արգելքներ ու խոչընդոտներ է հաղթահարել, շատ անգամ իբրև նորարար է հանդես եկել և իր սեփական խոսքը ասել հայոց լեզվի ու հայագիտության բազմազան հարցերի մասին: Եվ իսկապե՞ս. նա ստեղծել է մի շարք աշխատանքներ, որոնք առանձնապես որոշակի արժեք են ներկայացնում հայ քերականագիտության, հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայ բանարանագիտության բնագավառում և, անշուշտ, արժանի են բարձր գնահատության:

* * *

Արարատ Ղարիբյանի գիտական ժառանգության մեջ ամենից առաջ մեծ ու կարևոր տեղ են բռնում քերականագիտությանը և մասնավորապես հայոց լեզվի քերականությանը վերաբերող աշխատությունները: Դրանք կյանքին, դպրոցին ծառայող և ըստ այդմ էլ յուրատեսակ աշխատություններ են, որոնք մի կողմից՝ եթե հայ քերականագիտական մտքի զարգացմանը, ապա մյուս կողմից՝ դպրոցներում մայրենի լեզվի ուսուցման բարելավմանն են մեծապես նպաստել:

Նման հանգամանքով պայմանավորված՝ քերականական հարցերը Ա. Ղարիբյանի աշխատություններում ներկայացվում են հայոց լեզվի ուսուցման՝ մեթոդական հարցերի հետ շաղկապված և արժեքավորվում առավելապես գործնական դերով ու նշանակությամբ:

Ա. Ղարիբյանի քերականական-քերականագիտական հայացքներն ու ըմբռնումները մենք արտահայտված ենք տեսնում նրա «Հայոց լեզուն» դպրոցական դասագրքում, «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա», «Հայ ման-

կավարժական լեզվաբանություն», «Краткий курс армянского языка (Пособие для самостоятельного изучения)», «Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց» (Գ. Պարիսի հեղինակացությամբ) և մի շարք այլ աշխատանքներում, դասագրքերում ու ձեռնարկումներում, որոնցից շատերը շատ անգամ վերահրատարակվելով՝ նշանակալից գեր են կատարել մայրենի լեզվի ուսուցման գործում...

Ակադեմիկոս Արարատ Ղարիբյանը իսկական քերական էր՝ բառի ամենալայն իմաստով. դրա վառ ապացույցը առաջին հերթին նրա՝ 1934 թ. հրատարակած «Հայոց լեզվի քերականություն» դասագիրքն է, որը մշակվելով ու բարեփոխվելով՝ ավելի քան 30 տարի պատվով ծառայել է հայ դպրոցին և մայրենի լեզու սովորելու ձեռնարկ հանդիսացել բազում սերունդների համար:



Այդ դասագրքով Ա. Ղարիբյանը փաստորեն մի նոր էջ է բացել հայ քերականության պատմության մեջ: Հենվելով մի կողմից արևելահայ աշխարհաբարի քերականության բնագավառում հայ քերականագիտական մտքի, մյուս կողմից՝ ընդհանրապես լեզվաբանական գիտության ձեռք բերած նշանակալից փոփոխությունների վրա և ընկալելով առավել ճիշտ ու արժեքավոր, նա ստեղծել է հայոց լեզվի բերականության խոսքերգային շրջանի առաջին կայուն դասագիրքը, դառնալով Պալասանյան-Աբեղյան քերականների արժանավոր հաջորդը:

Հետևելով և՛ Ստ. Պալասանյանին, և՛ Մ. Աբեղյանին, Ղարիբյանը, սակայն, ոչ թե ուղղակիորեն կրկնել է նրանց, այլ քննաբար յուրացրել է անցյալի ժառանգությունը և առաջնորդել հիմնականում նրանով, թե քերականական օրենքներն ու կանոնները որչա-

փով են ճիշտ արտացոլում լեզվի իրական վիճակը, նրա կարգերն ու իրողությունները:

Գտնելով, որ քերականությունը իրոք երկու բաժին ունի՝ ձևաբանություն և շարահյուսություն, որոնք որոշակի կապի ու փոխհարաբերության մեջ են գտնվում, Ղարիբյանը միաժամանակ սահմանազատել է դրանք իրարից, նշել մեկի և մյուսի տարբերություններն ու առանձնահատկությունները, մեկի և մյուսի հետապնդած բուն խնդիրներն ու նպատակները: Այդպես և նահատակորեն տարբերակել է խոսքի մասերն ու նախադասության անդամները, դիտելով առաջինները որպես ձևաբանական, իսկ երկրորդները՝ որպես շարահյուսական իրողություններ:

Հայտնի է, որ իբրև քերական Ա. Ղարիբյանը գերազանցապես զբաղվել է ձևաբանության ուսումնասիրությամբ. ըստ այդմ էլ նրա քերականական աշխատություններում, դասագրքերում ու մեթոդական ձեռնարկներում կարևոր տեղ են բռնում խոսքի մասերը, արժանատիքով ճիշտ բնութագրման:

Խոսքի մասերի որոշման հարցում, իր իսկ բառերով ասած, ընտրելով իմաստային ուղին և ելակետ ընդունելով թեպետ նշանակությունը, սկզբից ևեթ Ա. Ղարիբյանը, մասնակի ուղղումներով, վերականգնում է խոսքի մասերի դասդասման ավանդական համակարգը և զոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ և կապ, շաղկապ, օպիստոխոնոմիա հաջորդաշարը համարում շաղկապի ճիշտ ու տրամաբանական՝ ինչպես գի-

տական-ճանաչողական, այնպես էլ մանկավարժական-ուսուցողական առումով:

Հայ քերականագիտությանը Ա. Ղարիբյանի մատուցած ծառայություններից մեկն էլ այն է, որ նա միանգամայն ճիշտ է ըմբռնել բայի եղանակա-ժամանակային ձևերի արեղյանական տեսության արժեքն ու էությունը և նրա հիման վրա ճշտորեն ներկայացրել ժամանակակից հայոց լեզվի բայի դեր-րայները և եղանակները, դրանց քերականական հարացույցն ու համակարգը: Առաջինն արձանագրելով ժխտման (սկզբնական անվանումով՝ ռզմական) դերբայի գոյությունը և տալով նրան քերականական անձնագիր, Ա. Ղարիբյանը, ինչպես հայտնի է, գտնում է, որ ժամանակակից հայոց լեզուն ունի 7 դերբայ՝ անորոշ, անկատար (երկու ձևերով), ապառնի, վաղակատար, հա-րակատար, ենթակայական, ժխտման, որոնք կուռ հաջորդաշար են ներկա-յացնում և այդ հաջորդաշարով էլ ավելի պարզորոշ բացահայտում դերբայ-ների թև՝ ընդհանուր կառուցվածքը, թե՛ ձևաբանական առանձնահատկու-թյունները և թե՛ փոխկապակցական հարաբերությունները:

Ա. Ղարիբյանի աշխատություններում իրենց ճիշտ նկարագիրն են ստա-ցել նաև բայի դիմավոր ձևերը՝ եղանակները: Սահմանական եղանակի համար ընդունելով 8 բաղադրյալ (դերբայից և օժանդակ բայից կազմված) և մեկ պարզ (բայական հիմքից և վերջավորությունից կազմված) ժամանակ, Ա. Ղա-րիբյանը միանգամայն ճիշտ է որոշել դրանց իմաստային ընդհանրություն-ներն ու տարբերությունները, իմաստային առնչակցություններն ու հանդի-պակադրությունները:

Բայի եղանակաժամանակային ձևերը որոշելիս Ա. Ղարիբյանը Մ. Արեղ-յանի պես հիմնակետ է ունեցել ժամանակակետի համեմատությամբ գործո-ղության արտահայտած հարաբերությունն ու հանդիպականությունը և ըստ այդմ էլ իր հերթին հաստատել, որ բայը ժամանակակից հայոց լեզվում ունի 5 եղանակ, որոնք և իրենց համապատասխան ժամանակներով մի կուռ ու օրինաչափական համակարգ են կազմում:

Ի պատիվ Ա. Ղարիբյանի պետք է ասել, որ ընդհանուր առմամբ նա հա-վատարիմ է մնացել հայ քերականական տերմինաբանության անցյալի լա-վագույն ավանդույթներին, տուրք չի տվել շինծու անվանումների և ոչ էլ հրապուրվել նման անվանումներով:

Առաջ գնալով նշենք, որ իր հեղինակած դպրոցական դասագրքում Ա. Ղարիբյանը պատշաճ տեղ է հատկացրել նաև հնչյունաբանությանը, բառա-գիտությանը ու բառակազմությանը, ուղղախոսությանն ու ուղղագրությանը և դրանք հիմնակետ դարձնելով ձևաբանության համար՝ առավել արդյունա-վետ դարձրել մայրենի լեզվի ուսուցումը: Իսկ սա ևս ցույց է տալիս, որ Ղա-րիբյանը ոչ թե սովորական, այլ մանկավարժ լեզվաբան-քերական էր և, իր-րև այդպիսին, ամեն կերպ ջանում էր, որ քերականությունը ուսուցանվի հեշտ ու մատչելիորեն, որ այն ծառայի իր իսկական նպատակին. ուստի նա ան-վերջ որոնումներ էր կատարում, իր կազմած դասագրքերն ու ձեռնարկներն անվերջ բարեփոխում էր ու կատարելագործում: Այդ են հաստատում թե՛ հիշյալ դպրոցական դասագրքերը, որի վերջին՝ 1964 թ. հրատարակությունը «անճանաչելիորեն» տարբերվում է առաջին՝ 1934 թ. հրատարակությունից և թե՛ այն մեթոդական աշխատությունները՝ «Հայոց լեզվի մեթոդիկայի ուր-վագիծ» (1935), «Հայոց լեզվի ուղղագրության հիմունքները և ուսուցման մեթոդները» (1935), «Հայոց լեզվի մեթոդիկա» (1938), «Մայրենի լեզվի մե-թոդիկա» (1940), «Հայոց լեզվի մեթոդիկա» (1954) և այլն, որոնք ուղղակի հենց մայրենի լեզվի ուսուցմանն են վերաբերում:

Բայց այս դեպքում ևս Ա. Ղարիբյանը նույն կետի վրա չի մնացել: Տարի-ների ընթացքում նա զարգացրել է նաև հայոց լեզվի դասավանդման ուս-մունքը, անկեղծ ու սրտառու զրույց է բացել ուսուցչի հետ, մայրենի լեզվի

¹ Տե՛ս, օրինակ, Ա. Ղարիբյան. Հայ մանկավարժական լեզվաբանություն. Երևան, 1969, էջ 123:

ուսուցման առավել հաջող ուղիներ է նշել, ցույց տվել, ասենք, թե ինչպես պետք է կազմակերպել ու անց կացնել հնչյունաբանության, ուղղագրության, բառագիտության, բառակազմության, քերականության՝ ձևաբանության ու շարահյուսության, այլև՝ բանավոր ու գրավոր խոսքի ուսուցումը դպրոցում:

Պրոֆ. Ա. Աբրահամյանի բնորոշմամբ այդ ամենի ամփոփումն ու բարձրակետը եղավ հեղինակի՝ 1954 թ. հրատարակած «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» աշխատությունը, որ այսօր էլ պահում է իր թարմությունը և լավագույն ուղեցույց-առաջնորդ է հանդիսանում մայրենի լեզվի ուսուցիչներին համար:

Զբավարարվելով այսքանով, Ա. Ղարիբյանը 1969 թ. հրատարակել է «Հայ մանկավարժական լեզվաբանություն» աշխատությունը, որն ամփոփում է նրա գիտամանկավարժական գործունեության արդյունքները և տեսական ու մեթոդական հարցերի գեղեցիկ համադրություն է կազմում: Գտնելով, որ կա «դպրոցի դասընթացի հարցերով զբաղվող լեզվաբանական մի ուղղություն», որը կոչվում է մանկավարժական լեզվաբանություն, նա այնտեղ բազմաթիվ տեսական ու մեթոդական հարցեր է քննել, շաղկապել դրանք իրար, ցույց տվել, թե ինչ սկզբունքներով պետք է կազմել մայրենի լեզվի դասագրքերը, ինչպես պետք է վարել մայրենի լեզվի ուսուցումը և բարելավել նրա զրկածքը ոչ միայն դպրոցներում, այլև բուհերում:

Ա. Ղարիբյանը խստորեն մտահոգվել է նաև ռուսական դպրոցներում հայոց լեզվի ուսուցման խնդիրներով և այդ ուղղությամբ ևս զգալի աշխատանքներ կատարել. 1950 թ. սկսած նա հայոց լեզվի քերականության դասագրքեր է կազմել ՀԽՍՀ-ի նաև ոչ հայկական դպրոցների համար և այդպիսով հնարավորություն ընձեռել, որպեսզի ռուսական կրթություն ստացողները սովորեն ու իմանան հայերեն:

Ա. Ղարիբյանը հայերեն գիտենալը պարտադիր էր համարում հանրապետության բոլոր բնակիչների համար և օգնության ձեռք էր մեկնում հայերեն սովորել ցանկացողներին: Հայրենական պատերազմի ժամանակ՝ 1944 թ. նա հրատարակում է «Краткий курс армянского языка (на правах самоучителя)» ինքնուսուցյցը, որը ցարդ 6 հրատարակություն է ունեցել (վերջին երեքը իր դստեր՝ բանասիրական գիտությունների թեկնածու Զ. Ղարիբյանի հեղինակակցությամբ) և շատ տարիներ մեծ դեր է կատարել և այսօր էլ շարունակում է կատարել հայերեն լիմացողներին ինքնուսուցմամբ հայերեն սովորեցնելու վեհ ու պատվավոր գործում:

Այդ ուղեցույց-ձեռնարկը, որ սկսում է համառոտ ակնարկով և որտեղ հայոց լեզվի պատմական կյանքն է ուրվագծվում, բաղկացած է «Հնչյունաբանություն», «Ձևաբանություն», «Բառակազմություն», «Շարահյուսություն», «Ընթերցանության նյութեր» մասերից և բառարանային բաժիններից, որոնք մի ամբողջություն կազմելով՝ դյուրացնում են հայերենի ինքնուսուցումը: Հայերենը այնտեղ ներկայացվում է թե՛ իր հիմնական, գործնական-ուսուցողական տեսակետից էական նշանակություն ունեցող իրողություններով, թե՛ ռուսաց լեզվի նկատմամբ դրսևորվող առանձնահատկություններով ու տարբերություններով և թե՛ այնպիսի նյութերով, տեքստերով ու վարժություններով, որոնք ապահովում են նրա արդյունավետ ուսուցումն ու յուրացումը:

Ա. Ղարիբյանը զգալի վաստակ ունի նաև հայկական դպրոցներում ռուսաց լեզվի ավանդման, ռուսաց լեզվի ուսուցման դրվածքը հայկական դպրոցներում բարելավելու, հայկական դպրոցների աշակերտներին ռուսաց լեզու սովորեցնելու և ռուսաց լեզվի գիտելիքներով զինելու նույնպես շատ կարևոր գործում: Ռուսագետներ Ռ. Մելքոնյանի և Մ. Կարաքեշիշյանի հետ միասին նա ռուսաց լեզվի դասագրքեր է կազմել 8—10-րդ դասարանների աշակերտների համար (ինչպես՝ «Русский язык. Лексика, фонетика, морфология. Учебник для 8-го и 9-го классов армянской средней школы», Ереван, 1953, «Русский язык. Синтаксис. Учебник для 10-го класса армянской средней школы», Ереван, 1954), որոնք քանիցս մշակվելով ու բարելավվելով՝ շուրջ 20 տարի հաջողությամբ ծառայել են հայկական դպրոցին:

Արարատ Ղարիբյանի դասագրքերն ու ձեռնարկները կազմված են տեսական-դիտական, մանկավարժական-մեթոդական կուռ սկզբունքներով և միանգամայն ճիշտ են արտացոլում լեզվի իրողությունները, նրա օրենքներն ու օրինաչափությունները:

Ա. Ղարիբյանի քերականական աշխատանքները երկար կյանք են ունեցել, ժամանակին ժողովրդականացել և ժողովրդականություն են վայելում նաև այսօր: Այդ աշխատություններով անվանի լեզվաբանը մեծ ծառայություններ է մատուցել հայ քերականագիտությանը և իր որոշակի տեղն ունի նրա պատմության մեջ:

* * *

Ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի գիտական ժառանգության մի մասն էլ վերաբերում է հայոց լեզվի պատմությանն ու պատմական քերականությանը: Ասպիրանտուրայում խորանալով հայոց լեզվի պատմության մասնագիտության մեջ, Ղարիբյանն իր գիտական գործունեությունն սկսել է լեզվապատմարանական հետազոտություններով: 1932—33 թթ. նա հրատարակել է հայոց լեզվի պատմության դասընթացի առաջադրանքներ, 1935 թ. «Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը», «Հայոց լեզվի պատմության ներածություն», 1937 թ.՝ «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» աշխատությունները, հետագայում հանդես եկել «Հայ ժողովրդական լեզուների պատմությունից» (1940), «Հայոց լեզվի պատմության հիմնական էտապների մասին»², «Գրարարի հոլովական ստադիալ սխտեմի մասին»³, «Մ. Նալբանդյանի լեզվաբանական ու լեզվամշակման հայացքները»⁴, «Խաչատուր Աբովյանի տեղը հայ գրական լեզվի պատմության մեջ»⁵, «К вопросу о месте и значении армянского языка в системе индоевропейских языков»⁶ և մի շարք այլ հոդվածներով ու ուսումնասիրություններով:

Դրանցում նա քննության է առել հայոց լեզվի պատմությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ձգտելով ցույց տալ, թե հայոց լեզուն երբ է ծնունդ առել ու կազմավորվել, զարգացման ինչ փուլեր է անցել, կառուցվածքային-տիպաբանական ինչ պատկեր է ներկայացնում և այլն: Այդ առումով առավել նրշանակալից է «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» աշխատությունը, որը հայոց լեզվի պատմության ամբողջական ուսումնական դասընթաց ստեղծելու առաջին փորձն էր հայ իրականության մեջ և ժամանակին էլ իբրև ձեռնարկ է ծառայել բուհերի բանասիրական ֆակուլտետի ուսանողության համար:

Տուրք տալով հանդերձ Ն. Յա. Մառի այսպես կոչված «լեզվի նոր ուսմունքին» և որդեգրելով լեզվի իբրև թե դասակարգային ու վերնաշենքային երևույթ լինելու մասին նրա տեսակետները, Ա. Ղարիբյանը, այնուամենայնիվ, կարողացել է դուրս գալ մատչյալ կապանքներից և տալ հայոց լեզվի պատմական կյանքի նկարագիրը:

Քննադատելով ու մերժելով հայերի ու հայերենի ծագման վերաբերյալ հայտնված անհիմն «տեսությունները», նա մերժում է նաև հայերի՝ իբրև թե եկվոր լինելու վարկածը և մի շարք փաստերով աշխատում է ապացուցել, որ հայերը բնիկ ժողովուրդ են և, իբրև այդպիսին, ձևավորվել են իրենց բնօրրանում՝ հայկական բնաշխարհում: Ուշագրավ է մանավանդ այն, որ ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ հայոց լեզվի գոյացումը հեղինակը իբրև բավական բարդ ու երկարատև պատմական գործընթաց է դիտում, գտնելով, որ

² «Սովետական մանկավարժ», 1941, № 4, էջ 82—89:

³ ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1946, № 1, էջ 45—60:

⁴ «Սովետական գրականություն ու արվեստ», 1954, № 12, էջ 114—124:

⁵ Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու», 1957, № 6, էջ 29—53:

⁶ Изд-во вост. лит-ры. М., 1969.

ներառում բազմատեսակ խմորումներ ու հեղաբեկումներ, տարրեթացություններ ու մակերեթացություններ են եղել...

Նկատելի է նաև, որ մառյան լեզվաբանական ուսմունքը Ղարիբյանի լեզվապատմաբանական ուսումնասիրություններում մեծ մասամբ արտաքին շղարշ է ծառայել և շատ էլ չի խանգարել նրան՝ հայոց լեզվի պատմությունը ներկայացնելու իր սեփական ըմբռնումներով ու պատկերացմամբ: Լեզվի պատմության հարցերը քննելիս Ա. Ղարիբյանը առավել մեծ հաջողությունների է հասնում, երբ կոնկրետ լեզվական նյութի ու իրողությունների ուսումնասիրությամբ է զբաղվում: Իբրև արժանիք պետք է նշել, որ այդպես վարվելով՝ իր «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» աշխատության մեջ նա գրաբարի, միջին հայերենի, մի շարք բարբառների և աշխարհաբարի հիմնականում ճիշտ նկարագիրն ու բնութագիրն է տվել և նրանց տիպաբանական առանձնահատկությունները պարզաբանել:

Նույնը պետք է ասել նաև «Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը» հետազոտության մասին, որը իրոք շատ արժեքավոր նյութ է պարունակում⁷ և որի հիման վրա էլ բնութագրվում են հայերենի հոգնակի նշանակող մասնիկները՝ իրենց արտահայտած իմաստներով, ձևաբանական կառուցվածքով ու դրսևորումներով, ժամանակի ընթացքում կրած փոփոխություններով ու տեղաշարժերով:

Ընդարձակելով իր ուսումնասիրությունների շրջանակները, Ղարիբյանը ջերմորեն արձագանքել է հայոց լեզվի պատմության հարցերին, ուշադրություն է դարձրել հայ նոր գրական լեզվի կազմավորման ու զարգացման խրնդիրներին, բարձր է գնահատել Խ. Աբովյանի և Մ. Նալբանդյանի դերը նոր լեզվի՝ աշխարհաբարի համար մղված պայքարում:

Արարատ Ղարիբյանը զբաղվել է նաև հայ լեզվաբանության պատմության հարցերով. նա հոգնածներ է գրել Մեսրոպ Մաշտոցի, Մ. Աբեղյանի, Հր. Աճառյանի, Ստ. Մալխասյանցի և այլոց մասին և ըստ արժանվույն գրնահատել նրանց գործունեությունը. մի շարք հոգնածներում, ինչպես՝ «Հին և նոր հայագիտություն»⁸, «Հայ լեզվաբանության զարգացումը սովետական կարգերում»⁹, «Սովետահայ լեզվաբանության նվաճումներ»¹⁰ և այլն, ներկայացրել է այն նվաճումները, որ ձեռք է բերել հայ լեզվաբանական միտքը մանավանդ խորհրդային շրջանում:

Ա. Ղարիբյանի՝ հայոց լեզվի պատմությանը և առնչակից այլ հարցերին վերաբերող աշխատությունները զերծ չեն, իհարկե, սխալներից, անընդունելի տեսակետներից և իրենց վրա կրում են, անշուշտ, ժամանակի ընդհանուր մտայնության և հատկապես՝ Ն. Յա. Մառի «Լեզվի նոր ուսմունքի» ազդեցության դրոշմը: Եվ, այնուհանդերձ, իբրև լեզվի պատմաբան, նա ևս գիտական արժեքավոր ժառանգություն է թողել և մեզ ինքնուրույն զեմք է ներկայանում նաև այդ բնագավառում:

* * *

Ակադեմիկոս Արարատ Ղարիբյանը միաժամանակ հայանի է որպես նըշանավոր բարբառագետ. մեծանուն հայագետ Հր. Աճառյանից հետո նա միակ խոշոր բարբառագետն է, որ անդադրում զբաղվել է հայերենի բարբառների ուսումնասիրությամբ, ի հայտ բերել ու նկարագրել մի շարք բարբառներ, քննել նրանց առաջացման, դասակարգման հարցերը, դրանք դարձրել համաշխարհային լեզվաբանական գիտության ուշադրության առարկան:

⁷ Տե՛ս Ա. Աբրահամյան. Ա. Ս. Ղարիբյան. — «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 18:

⁸ «Աշխատությունների ժողովածու» (ՀՄՍՌ Ն. Մառի անվան ինստիտուտ, հ. 1, 1946):

⁹ ՀՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 10:

¹⁰ «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 2—3:

Հայերենի բարբառների ուսումնասիրման գործին Ղարիբյանը ձեռնամուխ է եղել վաղ ժամանակից սկսած: Բարբառագիտության հարցերը նա քննության է առել նախ հայոց լեզվի պատմության հարցերի հետ կապված՝ և ապա՝ առանձին աշխատություններում: «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» (1939), «Համառոտություն հայ բարբառագիտության», «Հայերենի բարբառների դասակարգման խնդիրը», «Հայերենի բարբառները» (1941), «Նյութեր հայ բարբառագիտության» (1945), «Հայ բարբառագիտություն» (1950), «Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջը» (1952), «Հայ բարբառագիտություն» (1953), «Հայերենի մի քանի նորահայտ բարբառներ» (1955), «Հայերեն նորահայտ բարբառների մի նոր խումբ» (1958), «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» (1958), «Новая группа диалектов армянского языка» (1958), «Об армянском консонантизме» (1959), «Еще раз об армянском консонантизме» (1962), «О морфологии глагола армянских диалектов» (1964) — հա ժամանակագրական ոչ լրիվ՝ ցանկը¹¹ այն աշխատությունների, որոնցով նա հարստացրել է հայ բարբառագիտությունը և նպաստել նրա զարգացման:

Արդ՝ ո՞րն է հեղինակի բերած նորը այդ բնագավառում: Ամենից առաջ պետք է ասել, որ Ա. Ղարիբյանը հսկայական աշխատանք է կատարել նոր բարբառների հայտնաբերելու, նկարագրելու ու բնութագրելու ուղղությամբ:

Առանձնակի արժեք է ներկայացնում նրա հենց առաջին՝ «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» աշխատությունը¹², որտեղ հիմնավորվում է բարբառների «ս» ճյուղի գոյությունը և տրվում նրան պատկանող՝ Արդվինի, Շաղախի, Կարճևանի, Մեղրու, Հագրութի, Ուրմիայի բարբառների ամփոփ ներկայագիրը: Այդտեղ յուրաքանչյուր բարբառ պատկերվում է իր հնչյունական համակարգով, ձևաբանական (հոլովում, խոնարհում) կառուցվածքով և համապատասխան բարբառային նմուշներով:

Այդ աշխատությունը, որի համար հեղինակը բանասիրական գիտությունների դոկտորի աստիճանի է արժանացել, միաժամանակ բազմաթիվ համադրական ուսումնասիրություն է, որտեղ և ցույց են տրվում ինչպես հնչյունական, այնպես էլ ձևաբանական այն ընդհանրություններն ու տարբերությունները, որ երևան են հանում «ս» ճյուղի բարբառները միմյանց ներկատմամբ:

Այդ ամենին, որ կարևոր է, հավելվում է մի ծավալուն համեմատական բառարան, որտեղ հայերենի բառապաշարի միջուկը կազմող զրաբարյան բառերը ներկայացվում են «ս» ճյուղի բարբառներում գործածվող իրենց համապատասխան ձևերով ու համարժեքներով և այդպիսով էլ ցույց տրվում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

Շարունակելով հետախուզական աշխատանքները, Ղարիբյանը հետագա տարիներում նույնպես ի հայտ է բերել կամ քննության է բերել մի շարք նոր բարբառներ: Ուշագրավ են դրանց նվիրված՝ նրա «Հայերենի մի քանի նորահայտ բարբառներ» (1955) և «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» (1958) աշխատությունները, որոնցում էլ իրենց հնչյունական, ձևաբանական ու բառապաշարային նկարագիրն են ստացել Քեսաբի, Բեյլանի, Արամոյի, Քաբուսեի, Եղեսիայի և այլ բարբառներ:

Ա. Ղարիբյանը, սակայն, ոչ միայն հայ բարբառների հայտնաբերմամբ ու նկարագրությամբ, այլև բարբառագիտության տեսական հարցերով է զբաղվել: Նա հատուկ ուշադրություն է դարձրել մասնավորապես հայ բարբառների դասակարգման հարցի վրա և աշխատել այն ներկայացնել ավելի համակողմանիորեն:

¹¹ Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ, Սովետական Հայաստանի ակադեմիայի գիտնականները. Արարատ Սահակի Ղարիբյան. Երևան, 1971:

¹² Այդ աշխատությունը առաջին անգամ լույս է տեսել 1939 թ. Երևանի պետական համալսարանի ՌԳԻ-ի տպագրության աշխատություններում (հ. 11, էջ 23—138) և ապա 1940 թ.՝ առանձին գրքով:

Հայ բարբառագիտության համար մեծագույն նվաճում համարելով բարբառների՝ ըստ բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության Հր. Աճառյանի կատարած դասակարգումը, Ա. Ղարիբյանը միաժամանակ առաջարկել է բարբառների «էլ» ճյուղի անվանումը փոխարինել «լ» անվանումով, «ուլ», «կը», «լ» ճյուղերին ավելացրել է «ս» ճյուղը, գտել է, որ հայերենն ունի «նա» (Քեսաբ, Արաբկիր), «կա» (Ամասիա, Զեյթուն, Բեյլան, Սվեդիա, Մարաշ), այլև՝ գրաբարատիպ (հոտորջուր) ճյուղի բարբառներ¹³։

Բայց նա չի բավարարվել նաև այսքանով և հայ բարբառների մի այլ հնչյունաբանական դասակարգում է կատարել, որը իրոք բարբառագիտական շատ մեծ հայտնագործություն էր և, իբրև այդպիսին, մի այլ տեսանկյունից ոչ միայն տարբեր բարբառների դիմապատկերը, այլև նրանց ընդհանրություններն ու տարբերությունները, կապերն ու փոխհարաբերություններն է բացահայտում ու պարզ դարձնում։

Այդ դասակարգումը, որի հիմքում ընկած է հայերենի պայթական բաղաձայնների (բ—պ—փ) համակարգը, ցույց է տալիս, որ բարբառների բաղաձայնական փոփոխությունները կատարվել են «հիմնականում երկու տիպի տեղաշարժերի և մեկ տեղաշարժ-տեղափոխման միջոցով»¹⁴։ Առաջին տեղաշարժ է համարվում ձայնեղների խլացումը, ինչպես՝ բ>պ—բ>փ, դ>տ—դ>թ, ձ>ծ—ձ>ց, շ>չ—շ>ճ, գ>կ—գ>ք, երկրորդ տեղաշարժ՝ դրա հակառակ երևույթը՝ ձայնեղացումը և շնչեղ ձայնեղացումը, ինչպես՝ պ>բ—բ>բ', տ>դ—դ', ծ>ձ—ձ>ճ', ճ>շ—շ>ճ', կ>գ—գ>գ', իսկ տեղաշարժ-տեղափոխություն՝ «այդ երկու երևույթի միաժամանակյա առկայությունը միևնույն բարբառում», ինչպես՝ բ>պ կամ՝ բ>փ—պ>բ, դ>տ կամ՝ դ>տ—թ>տ, ձ>ծ կամ՝ ձ>ց—ծ—ձ, շ>ճ կամ՝ շ>չ—ճ>շ, գ>կ կամ՝ գ>ք—կ>գ։

Այս հիմքի վրա էլ ակադեմիկոս Ա. Ղարիբյանը բարբառների դասակարգում է կատարել, գտնելով, որ կան I. Առաջին տեղաշարժի ենթարկված բաղաձայնական համակարգ (բ>պ—բ>փ) ունեցող բարբառներ (Աստրախանի, Շամախու, Ղարաբաղի, Հադրութի, Մարաղայի, Ուրմիայի, Խոյի, Վանի)։ II. Երկրորդ տեղաշարժի ենթարկված՝ ա) երկաստիճան խլագուրկ բաղաձայնական համակարգ (պ>բ, բ>բ) ունեցող բարբառներ (Պոլսի, Եվդուկիայի, Նոր Նախիջևանի, Տրապիզոնի, Մարաշի)։ բ) եռաստիճան խլագուրկ բաղաձայնական համակարգ (պ>բ, բ>բ') ունեցող բարբառներ (Համշենի, Մյուրիայի, Ակնա, Շապին Գարահիսարի, Խարբերդ-Երզնկայի, Աստիալի, Սեբաստիայի)։ գ) քառաստիճան բաղաձայնական համակարգ (բ—բ', պ, փ) ունեցող բարբառներ (Արարատյան, Նոր Զուլայի, Կարնո, Մշո, Ողմիի)։ III. Տեղաշարժ-տեղափոխության ենթարկված՝ ա) երկաստիճան խլագուրկ բաղաձայնական համակարգ (բ>փ, պ>բ) ունեցող բարբառներ (Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոդոսթոյի, Նիկոմիդիայի, Օրտուի)։ բ) միջին հայերենի բաղաձայնական համակարգ (բ>պ, պ>բ) ունեցող բարբառներ (Զեյթունի, Հաճընի, Սվեդիայի, Բեյլանի, Քեսաբի) և վերջապես IV. Բարբառներ (Ղարադաղի, Դզմարի, Մեղրու, Կարճեանի, Արզվինի, Դիադինի, Մոկսի, Ամասիայի, Ագուլիսի, Թբիլիսիի, Արեշ-Հավարիկի), որոնք որևէ տեղաշարժի չեն ենթարկվել և պահպանել են գրաբարյան եռաստիճան (բ—պ—փ) բաղաձայնական համակարգը։

Բարբառների ինչպես ձևաբանական, այնպես էլ այդ՝ հնչյունաբանական դասակարգումը հիմք է ծառայել նրանց նաև տիպաբանական դասակարգման համար։ Բազմահարուստ տվյալների բաղդատման ու համադրման հիման վրա հնդինակը ճշտորեն նկատել ու արձանագրել է, որ տիպաբանական տեսակետից էլ հայերենի բարբառները բաժանվում են երեք խմբի՝ ա) դեբրայավոր, որ ներառում է «ուլ», «ս», «լ» ճյուղերի բարբառները։

¹³ Ա. Ղարիբյան. Հայ բարբառագիտություն. Երևան, 1953, էջ 56—62։

¹⁴ Նույն տեղում, էջ 58։

բ) մասնիկավոր. որ ներառում է «կը», «նա», «կա» ճյուղերի բարբառները և գ) գրաբարակերպ. որին պատկանում է հոտորջուրի բարբառը, և որն էլ սահմանական եղանակի ներկան ու անցյալի անկատարը կազմում է գրաբարյան ձևով:

Հայ բարբառագիտությանը Ա. Ղարիբյանի մատուցած ծառայություններից մեկն էլ այն է, որ նա բուհական ուսումնական ձեռնարկ է ստեղծել. ըստ որում ղգալով նման գործի կարևորությունը և պատասխանատվությունը, նա մշակել-բարեկերպել է այն և լեզվաբանական հայտնի բանավեճից հետո՝ 1953 թ. հրատարակած «Հայ բարբառագիտության» մեջ ոչ միայն վերանայել է անցյալում թույլ տված իր որոշ սխալները, այլև կատարել է հավելումներ և նորոգել մեկնաբանել մի շարք հարցեր ու երևույթներ:

Հիշյալ ձեռնարկը փաստորեն երկու մասից է բաղկացած. առաջին՝ սկզբի մասը հատկացված է բարբառագիտության տեսությանը, որտեղ և հայ բարբառագիտության պատմության, բարբառների ձևաբանական, հնչյունաբանական և տիպաբանական դասակարգման, բարբառների պատմական կյանքի և նրանց քանակի հարցերն են քննվում, տրվում. հայ բարբառների համեմատական հնչյունաբանությունը և ձևաբանությունը: Իսկ երկրորդ մասը հատկացված է բուն հայ բարբառագիտությանը, որտեղ և տարբեր ճյուղերի առավել կարեոր բարբառներն են ներկայացվում՝ իրենց հիմնական իրողություններով:

Ինչպես այլ, այնպես էլ բարբառագիտական ուսումնասիրություններում չգնալով տրորված ճանապարհներով՝ Ա. Ղարիբյանը հանդես է բերել լեզվական նուրբ զգացողություն և լեզվաբանական սուր միտք, առաջադրել է նոր խնդիրներ և աշխատել լուծել դրանք ինքնուրույնաբար: Ասվածի մի լավագույն ապացույցն էլ հայ բարբառների բաղաձայնական համակարգին՝ կոնսոնանտիզմին նվիրված «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը»¹⁵, «Об армянском консонантизме», «Еще раз об армянском консонантизме»¹⁶ հոդվածներն են, որտեղ հեղինակը այն տեսակետն է հայտնում ու աշխատում հաստատել, որ որոշ բարբառներում գործածվող շնչեղ ձայնեղ բաղաձայնները ոչ թե ուշ ժամանակի արտահայտություն են, այլ գալիս են հնդեվրոպական հիմք լեզվից և կապվում են նրա համանման հնչյունների հետ: Այստեղից էլ եզրակացվում է, որ հնդեվրոպական հիմք լեզվի քառաստիճան բաղաձայնական համակարգը գոյատևել է հայ բարբառներում և ըստ այդմ էլ՝ դրանք ավելի հին վիճակ են ներկայացնում, քան գրաբարը:

Սա, անշուշտ, հետաքրքրական ու ուշագրավ հարցադրում էր, որի շուրջը նախ՝ մեր հանրապետությունում՝ «Պատմա-բանասիրական հանդեսում», ապա՝ ամբողջ Միությունում՝ «Вопросы языкознания» ամսագրի էջերում ծավալվեց թեժ բանավեճ, և որին մասնակցեցին հայ և օտար մի շարք նշանավոր լեզվաբաններ, հայտնելով թե՛ր և դեմ կարծիքներ...

Այստեղ էլ նշենք, որ Ա. Ղարիբյանի բարբառագիտական ուսումնասիրությունները ևս զերծ չեն սխալներից, վրիպումներից ու փաստական անճշտություններից, առարկությունների հարուցող կետերից և ն. Յա. Մառի «Լեզվի նոր ուսմունքի» ազդեցությունից: Բայց դրանք, իհարկե, բոլորովին չեն նըսեմացնում ու արժեզրկում նրա բարբառագիտական գործունեությունը, այդ գործունեության տեսական ու գործնական նշանակությունը:

* * *



Մեծ է ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի վաստակն ու ավանդը նաև բառարանագրության բնագավառում: Գրագիտության բարձրացման գործին հետամուտ լինելով և դպրոցներում մայրենի լեզվի ուսուցման դրվածքը րա-

¹⁵ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3:

¹⁶ Տե՛ս «Вопросы языкознания», 1959, № 5; 1962, № 2:

րելավելու նպատակ հետապնդելով, Ա. Ղարիբյանը ամենից առաջ կարևոր նշանակություն է տվել ուղղագրական բառարաններին և առանձին կամ ուրիշների հեղինակակցությունը կազմել նման մի շարք բառարաններ: Այսպես՝ նա հրատարակել է 1940 թ.՝ «Ուղղագրական համառոտ բառարանը» (պարունակում է 4500 բառ), 1954-ին՝ «Հայերենի ուղղագրական նոր բառարանը» (պարունակում է 12000 բառ), 1956-ին՝ Գ. Պարիսի հետ միասին՝ «Դպրոցական ուղղագրական բառարանը» (պարունակում է 13000 բառ), 1965-ին՝ Գ. Շեկյանի հետ միասին՝ «Դպրոցական ուղղագրական բառարանը» (պարունակում է 17000 բառ), որը և վերահրատարակվել է մի քանի անգամ: Այդ բառարանները հայերենի ոչ թե ամեն տեսակ, այլ առավել դժվարագիր բառերն են ընդգրկում և կարևորվում հենց այդ առումով...

Ա. Ղարիբյանը շատ ավելի խոշոր աշխատանք է կատարել հայ-ռուսերեն և ռուս-հայերեն բառարաններ ստեղծելու գործում. Երվանդ Տեր-Մինասյանի և Մամիկոն Գևորգյանի հետ հրատարակել է 1945 թ.՝ «Ռուս-հայերեն բառարանը»՝ 28000 բառահոգվածով, 1947-ին՝ «Հայ-ռուսերեն բառարանը», որը վերահրատարակվել է 1960-ին՝ 28000 բառահոգվածի փոխարեն 40000 բառահոգվածով: Բացի այդ, նա ակտիվորեն մասնակցել է 1954—1958 թթ. Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Ռուս-հայերեն» քառահատոր բառարանի աշխատանքներին և խմբագրել դրա 3—4-րդ հատորները:

Անվանի լեզվաբանի բառարանագրական գործերի պսակը կազմում է նրա «Ռուս-հայերեն բառարանը», որը լույս է տեսել 1968-ին և այնուհետև վերահրատարակվել երկու անգամ: Այդ բառարանը ուրույն տեղ է բռնում ռուս-հայերեն թարգմանական բառարանագրության 200-ամյա պատմության մեջ և նրա մեծ նվաճումներից է:

Հմտորեն օգտագործելով թե՛ ռուս-հայերեն, թե՛ զուտ ռուսական և թե՛ ռուս-ազգային բառարանագրությունների բազմահարուստ փորձն ու տվյալները, հեղինակը տասնհինգամյա տքնաշան աշխատանքով ստեղծել է այնպիսի մեծածավալ բառարան, որը աչքի է ընկնում մի շարք աբսոլյուտներով:

Ռուսերենի հիմնական բառապաշարի հետ մեկտեղ բառարանն ընդգրկում է բազմահազար բառային կապակցություններ, հաճախ նաև նախադասություններ, որոնք միասին վերցրած ամբողջական են դարձնում ռուսական բառերը՝ երևան հանելով միաժամանակ նրա մեծ հարստությունները:

Այս բաժնում, սակայն, եթե Ա. Ղարիբյանը գերազանցապես օգտագործել է ԽՍՀՄ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի հրատարակած ռուսաց լեզվի քառահատոր և 17 հատորանոց բառարանների պարունակած նյութերը, ապա մյուս՝ հայերեն կամ թարգմանական բաժնում, հաշվի առնելով ռուս-հայերեն բառարանագրության նվաճումները՝ հանդես է բերել նաև ստեղծագործական մոտեցում և ըստ ամենայնի ձգտել ռուսերենի բառերը, բառակապակցությունները, ոճերն ու դարձվածքները հայերեն ներկայացնել համակողմանիորեն և առավել ճիշտ համարժեքներով:

Նվ իսկապես. նախորդների համեմատությամբ բառարանը և՛ մի շարք նորություններ է պարունակում, և՛, որ կարևոր է, ավելի համապարփակ է ներկայացնում ռուսերեն բառերի հայերեն թարգմանություններն ու նրանց բացատրությունները: Ռուսերենի գլխաբառերը (իրենց իմաստներով) թարգմանելիս առաջին անգամ ռուս-հայերեն բառարանագրության մեջ Ղարիբյանն է հարկ համարել անհրաժեշտ դեպքերում տալ նաև նրանց ռուսերեն հոմանիշները, որը և իրո՞ք «լավագույն միջոցներից է... բառը ընթերցողի հիշողության մեջ տպավորելու համար»¹⁷: Բառարանում, орինակ, гасить գլխաբառը ներկայացված է тушить (մարել, հանգցնել), аннулировать, ликвидировать (լիկվիդացնել, չեղյալ հայտարարել, մարել), заглушать (խեղչել, ճնշել) հոմանիշներով:

¹⁷ Ա. Ս. Ղարիբյան. Հայ-ռուսերեն բառարան. Երևան, 1968, էջ IX:

ինչպես այս, այնպես էլ կյանքի ու գիտության բազմազան բնագավառներին վերաբերող բառերի մասնագիտական-տեխնիկական բնույթը նախապես որոշելու միջոցներից հետո բառարանագիրն անցել է ռուսերենի գլխարառների բառահոգովածներում տրված բառային կապակցությունների, դարձվածքների ու նախադասությունների հայերեն թարգմանությանը և այդ իրագործել ամենայն հմտությամբ ու վարպետությամբ։ Բառարանի հայերեն թափնը, ոչ պատահականորեն, շատ կողմերով տարբերվում է նախորդ բառարաններից և գերազանցում դրանց։

Ռուսերենի գլխարառների թե՛ հիմնական և թե՛ փոխաբերական ու ներբերանգային իմաստները համապատասխան համարժեքներով մանրամասնորեն ներկայացնելու համար Ա. Ղարիբյանը լավագույնս օգտագործել է հայոց լեզվի բառագանձի, հատկապես՝ հոմանշային հարստությունները. բառարանում բազմաքանակ բառերի իմաստներն ու նրբերանգային նշանակությունները բացատրված են մի շարք տեղին ու դիպուկ հոմանիշներով։

Դրանցից բացի, ռուսերենի գլխարառների հիմնական ու փոխաբերական իմաստները, նրանց նրբերանգային նշանակությունները շատ ավելի լայն ընդգրկմամբ ու հարստությամբ, բազմակողմանի տարբերակմամբ և դարձյալ գերազանցապես բառային կապակցությունների ցուցադրմամբ իրենց գեղեցիկ արտացոլումն են ստացել այնտեղ։

Բառարանի թարգմանական բաժինը լինելով ռուսաց լեզվի հիմնական բառապաշարի լավագույն արտահայտությունը՝ հայերեն, միաժամանակ ամփոփում է հայոց լեզվի բառագանձի մեծագույն հարստությունները՝ բառակազմական ճկուն ու բազմազան միջոցներով։ Դրանց լայն հնարավորությունների ընձեռմամբ բառարանագիր հեղինակը հարկ եղած դեպքերում նաև բառաստեղծական-բառաշինարարական աշխատանքներ է կատարել՝ հայերենի թարգմանելով մի շարք բառեր, ինչպես՝ бенефис—պատվախաղ, запес—պառլտապար, замша — թավշակաշի, замшевы́й — թավշակաշվի, универсал — համախանութ և այլն։

Այս և այլ արժանիքների շնորհիվ Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանը» սեղանի, ամենօրյա գործածության գիրք է դարձել, շատ լայն կիրառություն է գտել և կարևոր դեր է կատարում ռուսաց լեզվի յուրացման գործում։ Այդ բառարանը բարձր է գնահատվել գիտական հասարակայնության կողմից և ժամանակին էլ, ինչպես հայտնի է, արժանացել է պետական մրցանակի։

Բայց այսքանով ևս ամեն ինչ չի ավարտվում։ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում իբրև դիրեկտոր աշխատելու տարիներին Ա. Ղարիբյանը հայ բառարանագրությանը նպաստող ուրիշ շատ կարևոր, հայրենա՝ նվեր գործեր է արել, որոնցից է, օրինակ, բազմահարուստ բառաքարտարանի ստեղծումը, որի հիման վրա կազմվել է քառահատոր՝ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը», և որի առաջին հատորի գլխավոր խմբագիրն էլ եղել է ինքը։

Ա. Ղարիբյանի կարևորագույն ձեռնարկումներից մեկն էլ հայ հին մատենագրական երկերի համաբարբառների ստեղծումն է։ Սակավաթիվ աշխատակիցների ու գրաբարագետների ջանքերով և իր իսկ Ղարիբյանի ընդհանուր ղեկավարությամբ կազմվել ու հրապարակվել են Եզնիկի, Կողոմնի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Եղիշեի, Գրիգոր Նարեկացու, Հովհաննես Դրասխանակերտցու, Դավիթ Անհաղթի, Մխիթար Անեցու և այլոց երկերի համաբարբառները, որոնք յուրատեսակ հանրագիտարաններ են և մեծ համարում են ձեռք բերել ու բարձր գնահատվել ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում։

Ա. Ղարիբյանի ձեռնարկած նույն այդ աշխատանքները խթան են ծառայել, որ նրանք շարունակվեն նաև հետագայում՝ ՀԽՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում, որտեղ և այլ հեղինակների համաբարբառներ են կազմվում, և որոնք նույնպես մեծ արժեք են ներկայացնում ինչպես

հայ բառարանագրության ու լեզվաբանության, այնպես էլ հայ հոգևոր մր-
շակույթի համար:

Ակադեմիկոս Արարատ Ղարիբյանը ունի նաև այլ նախագծումներ ու
նպատակագրումներ: Իր կյանքի վերջին տարիներին նա եռանդաբար աշ-
խատում և ցանկանում էր ստեղծել «Ռուս-հայերեն բառարանին» համարժեք
«Հայ-ռուսերեն բառարան», բայց մահը, որ վրա հասավ 1977 թ. մարտի 1-ին,
խանգարեց իրագործելու այդ և այլ ծրագրեր: Չնայած դրան, ինչպես շարա-
գրված է ցույց ապրիս, տաղանդաշատ լեզվաբանը թողել է բազմահարուստ
գիտական ժառանգություն և իրրև քերական, լեզվի պատմաբան, բարրա-
նագետ, բառարանագետ իրոք պատվավոր տեղ է գրավում հայ լեզվաբանու-
թյան և հայագիտության պատմության մեջ:

ԱՐԱՐԱՏ ԳԱՐԻԲՅԱՆ

(К 90-летию со дня рождения)

Доктор филол. наук А. С. МАРКАРЯН

Резюме

Академик АН АрмССР Арарат Саакович Гарибян (1899—1977) известен как вид-
ный грамматик-методист, историк-языковед, диалектолог и лексикограф. Более 50 лет
он занимался плодотворной научно-педагогической деятельностью. Его перу принадле-
жит ряд ценных грамматических, методических, диалектологических, лексикографиче-
ских трудов, учебников и учебных пособий. Академик А. С. Гарибян был также та-
лантливым организатором науки. По его инициативе было создано несколько научных
центров. Велики заслуги А. С. Гарибяна и в деле подготовки целого поколения моло-
дых армянстов.